ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ Գ. ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ

Ապրիլի 2-ին՝ կիրակի օրը, ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Երևանում՝ քաղաքային խորհրդի նախագահ, պ. Գ. Հասրաթյանին և խորհրդի անդամներին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին տ. Հայկազուն և տ. Վահան սրբազանները, տ. Կյուրեղ և տ. Ներսես վարդապետները, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը, Մայր Աթոռի դիվանապետը և Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները:

Ընդունելությանը ներկա էին նաև Երևանի քաղաքային խորհրդի նախագահի տեղակալներ Ն. Միրզոյանը, Հ. Ավետիսյանը, քաղաքային խորհրդի քարտուղար Հ. Բաղրասյանը, պլանային հանձնաժողովի նախագահ Գ. Փանոսյանը:

Որպես հյուր՝ ընդունելությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաֆյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Վեհափառ Հայրապետը առաջինը ողջունելով պ. քաղաքագլխին, ասաց.

«Մեծահարգ պարոն քաղաքագլուխ, մեծ ուրախություն է Մեզ համար սույն հարկի տակ երկրորդ անգամ ողջունել Ձեզ և Ձեր գործակիցներին:

Երկու-երեք տարում, երբ մի անգամ պաշտոնական այցով գալիս ենք ս. Սարգիս եկեղեցի, ցանկանում ենք Մեր ողջույնն ու օրհնությունը բերել նաև Ձեզ: Մենք էլ ուրախանում ենք մեր մայրաքաղաքով, որի գլուխը Դուք եք: Մեր ողջույնի խոսքը բավական է, որ նախ Ձեզ ուղղվի և Ձեր միջոցով քաղաքային խորհրդի պատվարժան անդամներին, Ձեր գործակիցներին, ճարտարապետներին, շինարարներին, բանվորներին, որոնց միացյալ հարատև ու կազմակերպված աշխատանքի շնորհիվ օր առավոտ գեղեցկանում է Երևանը, Ձեր շինարար գործունեությամբ, գիտությամբ և հաշակով: Ազգային սնապարծություն չէ, երբ հաստատենք, մեր Երևանը իրոք որ աշխարհի սիրուն քաղաքներից մեկն է:

Շնորհավորում ենք Ձեզ՝ ձեռք բերված կառուցողական փայլուն արդյունքների համար, հայտնում՝ Մեր շնորհակալությունն ու երախտագիտությունը և ցանկանում ենք Ձեզ և Ձեր գործակիցներին նորանոր նվաճումներ, Ձեր հայրենաշեն աշխատանքի հանապարհին»:

Մեծահարգ պ. Գ. Հասրաթյանը Հայոց Հայրապետին պատասխանելով ասաց.

«Ես և իմ գործակիցները շատ ուրախ ենք կրկին անգամ Ձեզ ողջունելու համար այստեղ և շնորհակալություն հայտնելու Ձեր այցելության համար: Մենք էլ երախտապարտ ենք Ձեզ, Վեհափառ, հայկական հուշարձանների պահպանման բնագավառում Ձեր կատարած կարևոր աշխատանքների համար, օրինակ, էջմիածնում, ուր այցելում են նաև մեր հյուրերն ու բարեկամները՝ խորը տպավորություն ստանալով: Այդ մեզ ուրախացնում է:

Մեր ժողովուրդը հետաքրքիր ժողովուրդ է: Կառուցում է միշտ, երբ խաղաղ է, չի կարողանում հանգիստ նստել: Մենք ողջունում ենք Ձեզ նաև որպես խաղաղության գործի պաշտպանի, որի մասին մենք քաջ տեղյակ

եմ: Խաղաղության համար մղված պայքարում Ձեր աշխատանքը արժանի է մեր գնահատանքին: Ցանկանում եմ Ձեզ հաջողություն Ձեր բազմակողմանի գործունեության մեջ»:

Այնուհետև տեղի է ունենում ջերմ զրույց, որի ընթացքում պ. Գ. Հասրաթյանը խոսում է քաղաքապետության առաջ դրված շինարարական, բարեկարգման այն ծրագրերի և աշխատանքների մասին, որոնք պետք է կատարվեն այս և հաջորդ տարիներին:

Ըստ պ. Գ. Հասրաթյանի վկայության, մայրաքաղաքում շինարարական ծավալուն աշխատանքներ են կատարվում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առիթով:

Այս տարի կավարտվի նաև Ապիրլյան եղեռնի հուշարձանի կառուցումը, կանաչապատումը, որը մայրաքաղաքի մոնումենտալ կառույցների մեջ իր յուրահատուկ տեղն է գրավելու:

Շուտով կսկսվի շինարարությունը Կոմիտասի անվան դասական երաժշտանոց-տան, ճարտարապետ Ս. Քյուրքչյանի նախագծով, ուր հայ դասական ճարտարապետության մոտիվները և ժամանակակից ճարտարապետական ոճը միմյանց կլրացնեն, չափազանց հետաքրքիր, ճարտարապետական նոր մտքի հղացման ու թռիչքի մեջ:

1968 թվականի հոկտեմբերի առաջին կեսերին, կնշվի Երևանի հիմնադրման 2750-ամյակը:

Վեհափառ Հայրապետը զրույցի վերջում իր խորունկ շնորհակալությունն է հայտնում և հրաժեշտ է առնում լավագույն տպավորություններով:

Այս առթիվ պ. քաղաքագլուխը Վեհափառ Հայրապետին նվիրում է Երևանում նոր կառուցվելիք Կոմիտասի անվան դասական երաժշտանոց-տան մակետը:

Ժամը 4-ին, Երևանի Հայրապետական վիլլայում, թեմական խորհուրդը ի պատիվ Վեհափառ Հայրապետի ընդունելություն է կազմակերպում:

Որպես հյուր ընդունելությանը ներկա են լինում նաև Երևանի քաղաքագլուխ Գ. Հասրաթյանը և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Ընդունելությունը անցնում է ջերմ, հայկական մթնոլորտում: